ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/89 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **29 դեկտեմբերի 2025թ.**

2025թ. դեկտեմբերի 19-ից 29-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ սեղմված բնական գազի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/89 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Սուքիասյան՝ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ,
Վ. Սանթոսյան՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ,
Ն. Բաղդասարյան՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ՝ նյութական գծով:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 Հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մեսնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 19-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 09:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Սեղմված բնական գազ 1 | 116000000 | 22.12.2025 09:00 | 144000000 |
| 2 | Սեղմված բնական գազ 2 | 224250000 | 22.12.2025 09:00 | 270000000 |
| 3 | Սեղմված բնական գազ 3 | 211791666.7 | 22.12.2025 09:00 | 255000000 |
| 4 | Սեղմված բնական գազ 4 | 430000000 | 22.12.2025 09:00 | 516000000 |
| 5 | Սեղմված բնական գազ 5 | 236709333 | 22.12.2025 09:00 | 285000000 |
| 6 | Սեղմված բնական գազ 6 | 498333333 | 22.12.2025 09:00 | 600000000 |
| 7 | Սեղմված բնական գազ 7 | 361291666 | 22.12.2025 09:30 | 435000000 |
| 8 | Սեղմված բնական գազ 8 | 239200000 | 22.12.2025 09:30 | 288000000 |
| 9 | Սեղմված բնական գազ 9 | 250000000 | 22.12.2025 09:30 | 300000000 |
| 10 | Սեղմված բնական գազ 10 | 130812500 | 22.12.2025 09:30 | 157500000 |
| 11 | Սեղմված բնական գազ 11 | 107500000 | 22.12.2025 09:30 | 129000000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ՍՈԼԻԱՆ» ՍՊԸ | Հայաստան, Երևան, Կենտրոն, Սարմենի փող., շ. 62, բն. 11, 0010, 098685055 | hagroupllc@mail.ru | 00845172 |
| 2 | «ՕԼԻՎԵՍՏԱ» ՍՊԸ | ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի Փ. / --- / 107/10 ԱՐՏԱՇԱՏ 0701 ԱՐՏԱՇԱՏ ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ, 055822228 | Olivestallc@gmail.com | 00076917 |
| 3 | «ԱՐԳ-ԼԵՎ ԳԱԶ» ՍՊԸ | ՄԽՉՅԱՆ 0725 ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ, 055822228 | arglevgazllc@gmail.com | 04222788 |
| 4 | «ԳԱՍՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, 3-րդ թաղ., 19/2, 098378837 | armenhv@mail.ru | 01401592 |
| 5 | «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ, Առինջ, 098378837 | armenhv@mail.ru | 03521619 |
| 6 | «ԳԱԶ ՌՈՒԲԻՆ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան 13/8, 098378837 | armenhv@mail.ru | 08626407 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | «ԷԼՍԻ ՍՏԻԼ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Միկոյան 103, 098378837 | aram.37@mail.ru | 00075579 |
| 8 | «ԳԱԶ ԸՆԴ ԳՈՌԻ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Սասնա Ծռեր փ., 1/5, 098378837 | aram.37@mail.ru | 08276858 |
| 9 | «Մատակարար3» | 123 | 123 | 00000003 |
| 10 | «Վ-ՍԱՆԿ» ՍՊԸ | ք. Երևան, Ա. Բաբաջանյան 2/2, 093888881 | v_sank2003@yahoo.com | 01833791 |
| 11 | «Ս.Լ.Լ.- ԳԱԶ» ՍՊԸ | Կոտայք գ. Պռոշյան Գ.Չավուշի 131/7, 099200000 | angelagasparyan@icloud.com | 03316094 |

2025թ. դեկտեմբերի 19-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ

**«ՍՈԼԻԱՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում 1-ին չափաբաժնի մասով բացակայում է առաջարկվող ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվությունը,

**«ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա «Լիազորագիր» փաստաթղթում գնման ընթացակարգի ձևը նշված է «բաց մրցույթ», մինչդեռ սույն Ընթացակարգի գնման ձևն է «էլեկտրոնային աճուրդ»,

**«ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա «Լիազորագիր» փաստաթղթում տնօրենի անուն ազգանունը նշված է «Հարություն Դարբինյան», մինչդեռ Հավելված 1-ով և Հավելված 1.3-ով ներկայացվող համապատասխանաբար «ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*» և «ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎ» փաստաթղթերում տնօրենի անուն ազգանունը նշված է «Ա. Մելոյան», որոնք անհրաժեշտ է կամ՝ համապատասխանեցնել, կամ՝ ներկայացնել հիմնավորումներ, որ տվյալ ժամանակահատվածներում ստորագրված փաստաթղթերի դեպքում տնօրենները եղել են տարբեր,

**«ՕԼԻՎԵՍՏԱ» ՍՊԸ -ի, «ԱՐԳ-ԼԵՎ ԳԱԶ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված 1-ով ներկայացված «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթերում բացակայում է մասնակցի ռուսերեն անվանումը, ինչպես նաև հայտերով ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքների 5-րդ կետում Ընթացակարգի ծածկագիր է նշված «ԵԱ-ԳՀԱՊՁԲ-25/60», մինչդեռ սույն գնման ընթացակարգի ծածկագիրն է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/89»,

**«Մատակարար3»**-ի կողմից Հավելված 1-ով ներկայացված «Դիմում-Հայտարարություն» փաստաթուղթը ներկայացված չէ հայերենով և հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, միաժամանակ 11-րդ չափաբաժնի մասով «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում բացակայում է առաջարկվող ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ներկայացված հայտում բացակայում է սույն գնման

ընթացակարգի հրավերի Հավելված 1.3-ով սահմանված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր փաստաթուղթը և Ընթացակարգի հրավերի 7.1 կետով պահանջվող բանկային երաշխիքի (հավելված 2) կամ կանխիկ փողի ձևով ներկայացվող հայտի ապահովումը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 19-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման և վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «ՍՈԼԻԱՆ» ՍՊԸ | 1440000000 | 1160000000 | 20% | 1392000000 | 1160000000 | 20% | 1392000000 | X |
| 2 | 1 | «ՕԼԻՎԵՍՏԱ» ՍՊԸ | 2700000000 | 2242500000 | 20% | 2691000000 | 2242500000 | 20% | 2691000000 | **Գնահատվել է անբավարար և մերժվել է** |
| 2 | 2 | «Վ-ՍԱՆԿ» ՍՊԸ | 2700000000 | 2249999995 | 20% | 2699999994 | 2249999995 | 20% | 2699999994 | |
| 3 | 1 | «ԱՐԳ-ԼԵՎ ԳԱԶ» ՍՊԸ | 2550000000 | 2117916666.7 | 20% | 2541500000 | 2117916666.7 | 20% | 2541500000 | **Գնահատվել է անբավարար և մերժվել է** |
| 3 | 2 | «Վ-ՍԱՆԿ» ՍՊԸ | 2550000000 | 2124999995 | 20% | 2549999994 | 2124999995 | 20% | 2549999994 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 1 | «ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ | 516000000 | 430000000 | 20% | 516000000 | 430000000 | 20% | 516000000 | X |
| 5 | 1 | «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ | 285000000 | 236709333 | 20% | 284051199.6 | 236709333 | 20% | 284051199.6 | X |
| 6 | 1 | «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ | 600000000 | 498333333 | 20% | 597999999.6 | 498333333 | 20% | 597999999.6 | X |
| 6 | 2 | «Վ-ՍԱՆԿ» ՍՊԸ | 600000000 | 499999995 | 20% | 599999994 | 499999995 | 20% | 599999994 | |
| 7 | 1 | «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ | 435000000 | 361291666 | 20% | 433549999.2 | 361291666 | 20% | 433549999.2 | X |
| 8 | 1 | «ԳԱԶ ՌՈՒԲԻՆ» ՍՊԸ | 288000000 | 239200000 | 20% | 287040000 | 239200000 | 20% | 287040000 | X |
| 9 | 1 | «ԷԼՍԻ ՍՏԻԼ» ՍՊԸ | 300000000 | 250000000 | 20% | 300000000 | 250000000 | 20% | 300000000 | X |
| 10 | 1 | «ԳԱԶ ԸՆԴ ԳՈՈՒ» ՍՊԸ | 157500000 | 130812500 | 20% | 156975000 | 130812500 | 20% | 156975000 | X |
| 11 | 1 | «Մատակարար3» | 129000000 | 180000000 | 20% | 216000000 | 9352500 | 20% | 11223000 | **Գնահատվել է անբավարար և մերժվել է** |
| 11 | 2 | «Ս.Լ.Լ.- ԳԱԶ» ՍՊԸ | 129000000 | 107500000 | 20% | 129000000 | 93525000 | 20% | 112230000 | |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 23-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. **«ՕԼԻՎԵՍՏԱ» ՍՊԸ-ի, «ԱՐԳ-ԼԵՎ ԳԱԶ» ՍՊԸ, «Մատակարար3»-ի** հայտերը գնահատել անբավարար, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.6 կետի պահանջները:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 25-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ Պաշտոնական աղբյուրների միջոցով չստուգել մասնակցի կողմից համապատասխանելու վերաբերյալ հայտով ներկայացված հավաստման իսկությունը՝ պատճառաբանված որոշման բացակայության հիմքով:

3. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ՍՈԼԻԱՆ» ՍՊԸ | բավարար |
| 2-րդ | «ՕԼԻՎԵՍՏԱ» ՍՊԸ | անբավարար |
| 3-րդ | «ԱՐԳ-ԼԵՎ ԳԱԶ» ՍՊԸ | անբավարար |
| 4-րդ | «ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ | բավարար |
| 5-7-րդ | «ՄՈՒԼՏԻ-ԼԵՈՆ» ՍՊԸ | բավարար |
| 8-րդ | «ԳԱԶ ՌՈՒԲԻՆ» ՍՊԸ | բավարար |
| 9-րդ | «ԷԼՍԻ ՍՏԻԼ» ՍՊԸ | բավարար |
| 10-րդ | «ԳԱԶ ԸՆԴ ԳՈՌԻ» ՍՊԸ | բավարար |
| 11-րդ | «Մատակարար3» | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2025թ. դեկտեմբերի 26-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված

մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

2025թ. դեկտեմբերի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի

միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ____________

Ն. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________